ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 329 -Ա
« 04 » ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025Թ.
ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N 216-Ն որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածի «1. Վարչատնտեսական մասի համակարգող՝ հանրակրթական ուսումնական հաստատության» մասի 25-րդ կետով և հիմք ընդունելով Արթուր Ստեփանյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2025 թվականի նոյեմբերի 10-ից դեկտեմբերի 12-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «ՀՀ Վայոց ձորի մարզի Արտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Արթուր Ստեփանյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արթուր Ստեփանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել նույն կազմակերպության տնօրենի Ժ/Պ Մարինե Խաչատրյանի վրա:
3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2025 թվականի դեկտեմբերի 15-ին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

Ք.եղեգնաձոր